

Ֆ. ՆԻՑԵԻ «ԳԵՐՄԱՐԴՈՒ» ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Մ. Ռ. ԵՆԼԻՆՅԱՆ

*...Որ չճճշի մեզ քո սերը,
Վրադ առար սատանայի զգեստները
Եվ նրա պես զագրախոսում ես նրբին:
Սակայն իզուր. քո աչքերը
Քո մեջ մատնում են սրբին:*

Պետեր Գաստ «Մպտված սուրբը»
(Թարգմ.՝ Հակոբ Մովսեսի)

Ֆ. Նիցշեի ուսմունքը (տեսական ժառանգությունը) ծնունդ էր XIX դ. երկրորդ կեսի ծանր, ճգնաժամային իրավիճակի, որից Նիցշեն էլք էր տեսնում մարդուց Մարդ անցումով՝ մարդու բարոյական կատարելագործումով: Մեծ փիլիսոփայի գաղափարները, որ տրված են շուրջ մեկ հարյուրամյակ առաջ, պատմության ողջ կտրվածքով դիտելիս թվում են երեկ կամ հենց այսօր գրված: Նրա տեսակետները արդիական էին և՛ իր օրերում, և՛ իր ժամանակից առաջ անցած, դրանք արդիական են նաև այսօր՝ մեկ դար անց: Ֆ. Նիցշեի գաղափարները ծրնվում են մարդու նկատմամբ անսահման սիրուց, սակայն նրա աֆորիստիկ, պարադոքսալ գրելաոճը պատճառ է դարձել ոչ միայն տարրնթերցումների, այլև ճիշտ հակառակ մեկնաբանության: Մեծ փիլիսոփան ինքն էլ կոահում էր, որ «աֆավասիկ. ես գլխի եմ ընկնում՝ դուք իմ գերմարդուն սատանա՝ էիք անվանելու»¹:

Սովորաբար ընդունված է Ֆ. Նիցշեի ստեղծագործությունը բաժանել երեք փուլի: Առաջին շրջանում ստեղծվեցին «Ողբերգության ծնունդը երաժշտության ոգուց» (1872), «Փիլիսոփայությունը Հունաստանի ողբերգական դարաշրջանում» (1873), «Անժամանակյա դիտարկումներ» (1873-1876) գործերը: Երկրորդ փուլը նշանավորվեց «Մարդկային, չափազանց մարդկային» (1878-1880), «Արշալույս» (1881) և «Զվարթ գիտություն» (1882) աշխատություններով, որոնք ասես առաջին շրջանի արժեքների վերագնահատումն էին: Երրորդ խմբի մեջ մտնում են նաև «Այսպես խոսեց Զրադաշտը» (1883-1886), «Բարուց և չարից անդին» (1886), «Բարոյականության ծագումնաբանության շուրջը» (1887), «Ընդդեմ Բրիստոսի» (1888) երկերը, ինչպես նաև Նիցշեի խելագարությունից հետո տպագրված «Զաստվածների մթնշաղը», հետմահու հրատարակված «Ecce Homo» (1908) աշխատությունը և 1880-ական թվականների նոթերը, որոնք հայտնի են «Կամք առ իշխանություն» վերնագրով: Վերոհիշյալ աշխատություններում ուրույն գրելաոճով համակարգված են փիլիսոփայական մտքեր, տեսակետներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս Նիցշե մտածողի աշխարհայացքի մասին: Ֆ. Նիցշեի փիլիսոփայական հայեցակարգում առանցքային է երեք հասկացություն՝ «կամք առ իշխանություն», «գերմարդ» և «հավերժական վերադարձ»: Վերոհիշյալ աշխատություններում Նիցշե համարը դրսևորվում է և՛ որպես փիլիսոփա, և՛ որպես բանասեր, և՛ որպես բանաստեղծ (ամենալայն առումով), այլև երևակվում է մարդկային խառնվածքի և հոգեբանության գույների ողջ սպեկտրը: Ժամանակակիցներն ընդգծել են նրա ինքնամփոփ ու ամոթխած բնավորության

¹ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, մ. II, «Նորք», 1990, թ. 6, էջ 117:

մասին, այնինչ աշխատություններում բացվում է արտաքինից չերևացող խոր մի աշխարհ, որն այնքան հակադիր է թվացյալին: Կյանքի օրինաչափությունն է սա. թվացյալի տակ իրականը տեսնելը, դիմակի տակ ճշմարիտը նկատելը հասու չէ ամենքին.

**Քու՛յր, սիրելեան, օտար մարդիկ, բարեկամ ու անաճանոթ
Մոտոպս աճցան. տաղերիս տակ կենդանի մարդը չտեսան՞:**

Իսկ մեծ անհատի և իր ժամանակաշրջանի հակադրությունը օրենք է անխրտի թուր ժամանակների համար: Նիցշեի գրքերում, ինչ թեմայի մասին էլ հեղինակը խոսելիս լինի, տողատակում շարունակ զգացվում է հանճարի *մենակությունը, չհասկացվածությունը*, մերձավորների հալածանքից հոգնած, բայց չհանձնված անհատը: «Ինձ հաճախ հարցնում են, թե ինչն՞ է եմ ես, իրոք, *գերմաներեն* գրում. ուրիշ ոչ մի տեղ ինձ ավելի վատ չեն կարդում, քան հայրենիքում: Բայց թե ի վերջո ո՞վ գիտի՝ ես *ուզո՞ւմ եմ արդյոք*, որ ինձ այսօր կարդան: - *Ստեղծել բաներ, որոնց վրա ժամանակն իզուր իր ատամները կփորձի ձևով, էությունականությամբ* հետամտել փոքր մի անմահության - ես դեռ երբեք բավականին համեստ չեմ եղել *ինձանից ավելի քիչ պահանջելու համար: Ասույթը, ասացվածքը, որոնցում ես գերմանացիների մեջ առաջին վարպետն եմ, «հավերժության» ձևերն են*. Իմ պատվախնդրությունն է՝ տասը նախադասությամբ ասել այն, ինչ ցանկացած այլ ոք ասում է մի գրքով, - ինչ ցանկացած այլ ոք մի գրքով չի ասում... Ես մարդկությանը տվել եմ ամենախոր գիրքը, որ նա ունի, իմ *Ջրադաշտը*. մի փոքր ևս՝ ես կտամ ամենաանկախը՝ (ընդգծումներն իմն են - Մ. Օ.): Մեքերումից երևում է, որ Նիցշեն հստակ գիտե՞ խտացված մտքերի ձևով՝ որպես ասույթ կամ ասացվածք, իր գաղափարները հասանելի չեն ամենքին, սակայն մեծ փիլիսոփան իր օրերում՝ կարճ մի անմահության հատվածում, մտադրված չէ հասկանալի լինելու համար ավելի մատչելի շարադրել ասելիքը. եթե ինքն ավելի խորի և շատի է ընդունակ, արհեստականորեն ինչն՞ է պարզունակ դառնալ: Նա համոզված է, որ իրեն ասպագայում են հասկանալու: Այդ պատճառով էլ իր գաղափարների մասին հաճախ օգտագործում է «մենք՝ ազատ մտքերս», «գալիքի մտքերս» արտահայտությունները: «Բարուց և չարից անդին» աշխատությունն ունի «Նախերգ գալիքի փիլիսոփայության» ենթավերնագիրը, ուր հստակ հղում է արվում հեղինակի՝ իր օրերում հասկացվելու մտադրությունն չունենալու մասին: Նա ընդգծում է, որ մարդկությանն ինքը տվել է «ամենախոր գիրքը»՝ «Իմ»-ը այստեղ չպետք է հասկանալ «Ջրադաշտ» հատկացյալի հատկացուցիչ՝ ուղիղ իմաստով. այն ճշանակում է Ջրադաշտի տեսության, գաղափարների միջնակամ մեկնաբանություն, կամ նույնն է թե Ջրադաշտն ու Նիցշեն նույնականանում են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր կրոնական ուսմունքների շարադրանքը սիմվոլների առատություն է, իսկ հերմետիկ գիտելիքներն ընդհանրապես դժվարմեկնելի են եղել, պարզ կդառնա նաև, թե ինչու է ի՛ր Ջրադաշտը Նիցշեն շարադրել սիմվոլներով և այլաբանությամբ:

Ասույթների և ասացվածքների վերածված նրա խտացված մտքերը ոչ միայն հեշտ հասկանալի չեն, այլև երբեմն հակասական են թվում և հասկացվում ճիշտ հակառակ իմաստով: Դրա պատճառը միջնակամ հարուստ ոճն է՝ «մարգարեական», երբեմն «այծամարդու», երբեմն «կեսարյան-հրամայական», երբեմն «աղերսական-ճգնակեցական», երբեմն «հումորային-արիստոփանեսյան», երբեմն բանաստեղծական, երբեմն ամենազանազան դիմակներով, «որոնք բանաստեղծության և փիլիսոփայության եզակի մի համադրություն են կազմում՝ ծայրեծայր լեցուն բազմաթիվ գրքերի, Աստվածաշնչի, բուդդայական տեքստերի, հույն

² Ե. Չարենց, Տաղարան, ԺԶ:

³ Ֆ. Նիցշե, Չաստվածների մթնշաղ, Եր., 1992, էջ 250:

փիլիսոփաների գրությունների...»⁴ բազմաթիվ աղերսներով, բանավեճով, ծաղրանմանակմամբ: Այսպես՝ «Նա, ով քաղցածին կերակրում է՝ զովացնում է իր սիրտը»⁵, այս միտքը հակասական է թվում. ինչպե՞ս կարող է ուրիշին կերակրողն ինքը զովանալ: Միտքը հասկանալուն օգնում է քրիստոնեական սիմվոլիկան: Քրիստոսը կենաց հաց էր՝ հոգևոր սնունդ: Քարոզելով՝ մեծ ռաբբին հոգևոր սննդով հագեցնում էր շատերի հոգու սովը և զովություն բերում հենց իր հոգուն: Նիցշեական պարադոքսալ մտածողության բանալիները քրիստոնեական և ընդհանրապես համաշխարհային սիմվոլներում են: Պարզելով դրանց իմաստը՝ Նիցշեի մտքերը դառնում են հստակ, դյուրըմբռնելի, իսկ ասելիքը՝ միանշանակ և աներկբայելի:

Եվս մեկ պարադոքսալ միտք. «... և լոկ այնժամ, երբ բոլորդ ինձ ուրացած կլինեք, ես կվերադառնամ ձեզ մոտ: Արդարև, իմ եղբայրներ, ես այդժամ այլ աչքերով կորոնեմ իմ կորուսյալներին. այլ մի սիրով այդժամ կսիրեմ ես ձեզ»⁶: Նորից օգտվենք հասկանալի քրիստոնեական սիմվոլիկայից:

Ավետարանական «Անառակ որդու վերադարձը» առակը պատմում է Աստծուց հեռացած, Աստծուն ժխտած որդու մասին, որը, հոգու տառապանքների պարունակներում գերհասունանալով, վերադառնում է դեպի Հայրը՝ դեպի փրկարար հույսն ու հավատը: Ծատ դժվար է ապավինել սեփական ուժերին՝ ժխտելով Աստծուն: Տեղին է հիշել է. Քանետիի խոսքերը. «Ով ասում է Աստված չկա, եղածի ողջ պատասխանատվությունը վերցնում է իր վրա»: Անառակ որդին հոգևոր հասունացմամբ ընկալեց Աստծո խորհուրդը և վերադարձավ դեպի Աստված, որը հենց գրկաբաց սպասում է մոլորյալ որդուն: Վերոհիշյալ նիցշեական պարադոքսում նույնն է ասված. «... և լոկ այնժամ, երբ բոլորդ ինձ ուրացած կլինեք, ես կվերադառնամ ձեզ մոտ»: Վերադարձն անխուսափելի է:

Նիցշեի «Այսպես խոսեց Ջրադաշտը» հեղեղված է սիմվոլներով, նույնը կարելի է ասել նաև մյուս աշխատությունների մասին, դրան էլ եթե ավելացնենք պարադոքսի կիրառությունը՝ որպես շարահյուսական կառուցվածքի վրա հիմնված բանադարձում և պատկերավորման միջոց, պարզ կդառնա, թե ինչու է Նիցշեն անհասկանալի համապատասխան պատրաստվածություն չունեցող ընթերցողի համար: Ֆ. Նիցշեն ոչ միայն չի ժխտում իր գործերի էլիտար ուղղվածությունը, այլ նաև ընդգծում է, որ դրանք հասու են դառնալու ապագա դարերում: Իրենից առաջ ասարած և իր ժամանակակից բազմաթիվ գիտնականների համարելով մակերեսային՝ Նիցշեն ամենևին էլ մեծագարությանբ չէր տառապում: Որպես բացառիկ հանճար՝ նա շատ վեր էր կանգնած նախորդ դարերից և իր օրերից. ամեն ինչ չափում էր «թոչնաբարձունքից»⁷: «Ի մերժումն Լոկի՝ իրեաների ծագման հարցում մակերեսայնության»⁸ Նիցշեն բացատրում է, թե ինչու է դարերի կտրվածքով նայելիս տարբեր երկրներում և տարբեր ժամանակներում ստեղծված փիլիսոփայական համակարգերի մեանությունն այնքան շատ: Գաղափարների տիպաբանությունը Նիցշեն բացատրում է մտածողության հետադարձ տունդարձով «դեպի հոգու հեռավոր, վաղնջական ընդհանուր կալվածք, որից այդ հասկացություններն են մի օր աճել»⁹: Նա պարզորոշ տեսնում էր, որ նույն հարցն ինքն ավելի խորն է տեսնում, քան շատ-շատերը. հանճարի մեանության ֆենոմենը հենց այստեղ է թաքնված: Նույն հարցին տարբեր գիտնականներ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում, քանի որ նրանց գիտական ներուժը տարբեր է: Իր գրելաճիմ

⁴ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, Եր., 2002, էջ 29:

⁵ Ֆ. Նիցշե, Ասպես խոսեց Ջրադաշտը, Եր., 1990. (Բաքու, 1914), էջ 20:

⁶ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, Եր., 2002, էջ 104:

⁷ Յու. Բորև, Գեղագիտություն, Եր., 1982, էջ 15:

⁸ Ֆ. Նիցշե, Բարոց և չարից անդին, Եր., 1992, էջ 22:

⁹ Նույն տեղում, էջ 21:

համապատասխան սիմվոլիկայով Նիցշեն յուրաքանչյուրի գիտական, ինտելեկտուալ և հոգևոր աճը ներկայացնում է լեռան սիմվոլով, և պարզվում է, որ Նիցշեն ամեն ինչ գնում է ամենաբարձր կատարից: Այսպես, «Բարուց և չարից անդին»-ը ավարտվում է այլաբանական-սիմվոլիկ մի բանաստեղծությամբ՝ վերնագրված «Բարձր լեռներից», ուր լեռը դիտված է որպես հոգևոր և մտավոր հասունության մի բարձունք, որտեղ վրա է հասնում «նոր պատանության բոցավա՛ռ կեսօրը»: Իրենից ներկայացնելով մտքի ընդհանրացման խոր պատկեր՝ սիմվոլն շատ մեծ դեր ունի գեղարվեստական պատկերի ստեղծման գործում: Եվ սիմվոլացումն օգտագործելով որպես զգայական, իմաստային, կոնկրետ ու վերացական նախասկիզբների միաձուլման հետևանք՝ հաճախ այն դառնում է գեղարվեստական մտածողության հիմնական ձև¹⁰: Այսպիսի հետաքրքիր սիմվոլ է «լեռը»: «Բարուց և չարից անդին» աշխատությունն ավարտող, ամփոփող «Բարձր լեռներից» բանաստեղծության մեջ Նիցշեն «նոր պատանության բոցավառ կեսօր» է համարում հոգևոր և մտավոր արթնությամբ Ջրադաշտին ըմբռնելը: Հին աշխարհի մեծագույն մտածողներից մեկի փիլիսոփայական-կրոնական համակարգը հասկանալը Նիցշեն որակում է որպես «նոր պատանության բոցավառ կեսօր», որպես *վերից վար նայելու հոգեբանություն*, որպես լեռան կատարից ամեն բան նկատելու և ընկալելու կարողություն: «Լեռ» սիմվոլն ընկալվում է որպես մարդու հասունության յուրահատուկ մակարդակ:

Ի դեպ, «Ջրադաշտ» անվան պահլավերեն տարբերակը Ջարդո՛շտ¹¹ է, որն իր արտասանությամբ «արթուն» բառի հետ հարանուրություն է. այստեղից երևում է, որ Ջարդոշտ=Ջրադաշտը սիմվոլ է (որի բացատրությունը արթնությունն է), ոչ թե անուն: Ասվածը սուկ վարկած չթվալու համար կատարենք ևս մեկ համադրում:

«Գիլգամեշ»-ում հերոսն իրեն հետաքրքրող հարցով (կյանք- մահ-անմահություն) հասնում է Մաշու լեռանը (լեռն այստեղ ևս սիմվոլ է), ուր Ուտնապիշտին (բանասիրության մեջ ապացուցված նույն ինքը ջրհեղեղյան Նոյը), որի շումերական տարբերակը Ջիուսուդրա¹² է (ակնհայտ է Ջարդոշտ-Ջարատուստրա-Ջիուսուդրա-Ջրադաշտ նույնությունը, լեզվական հարանուններ, որոնք բառացի նշանակում են «արթուն», «արթնացած»), պետք է պատասխաներ նրան հուզող հարցին: Խոր փիլիսոփայական այդ հարցերի պատասխանն իմացող Ուտնապիշտի=Նոյ=Ջրադաշտ=արթուն =արթնացածը առնչվում է «լեռան» սիմվոլին. Ուտնապիշտիի անվան հետ առնչվում է Մաշուն (շ>ս փոխանցումով՝ Մասիս), Նոյի անվան հետ՝ Արարատը (նորից Մասիս), իսկ Ջրադաշտին ըմբռնելը Նիցշեն որակում է որպես հոգեբանական մի վիճակ՝ «բարձր լեռներից»: Վերոհիշյալ դիցաբանական թե իրական կերպարները ոչ այլ ինչ են, քան սիմվոլներ, որոնք խորհրդանշում են հոգևոր և մտավոր արթնություն և հասունություն, նրանց ընդհանրությունը կամ նույնությունը լեռան բարձունքից վար նայելու հոգեբանությունն է:

Վերը ասվածը հենք ընդունելով՝ ինքնըստինքյան բացվում է համաշխարհային ջրհեղեղի հերմետիկ իմաստը. լեռան կատար բարձրացած Նոյը (Ուտնապիշտին, Ջրադաշտը) գիտեր կյանքի, մահվան, անմահության խորհուրդը: Մահը նախասահմանված է բոլորի համար, սակայն եզակի անհատներ հասնում են անմահության, բացառիկ անհատներ միայն, տվյալ հանգամանքներում՝ բարեպաշտ, աստվածավախ Նոյը: «Ջրհեղեղ» սիմվոլը խորհրդանշում է մահը, որը կործանեց բոլորին անհետք, միայն Նոյն է ապրում առ այսօր՝ իր թողած բարի

¹⁰ Ст'я М. Я. Поляков, Вопросы поэтики и художественной семантики, М., 1978, էջ 41:

¹¹ «Мифы народов мира», Энциклопедия, т. I, М., 1992, с. 460.

¹² «Эпос о Гильгамеше» («О все видавшем»), пер. акад. И. М. Дьяконова, М.-Л., 1961, с. 207.

անունով, որը ձեռք էր բերել բարի գործերով, բարեպաշտությամբ: Միայն Նոյնը (Ուտնապիշտին) գիտեր անմահության գաղտնիքը. այն է՝ գործն է անմահ: Բարու և չարի, մահվան և կյանքի, անմահության և հավերժության խորհուրդն իմացողը հավերժական սիմվոլներից առնչվում է «լեռան» սիմվոլի հետ:

Սա է պատճառը, որ Նիցշեն «բոցավառ կեսօր» է համարում «բարձր լեռներից» հոգեբանությունը:

Ի դեպ՝ Հ. Թումանյանի «Թմկաբերդի առման» մեջ գործի փառաբանման արմատները գալիս են «բարձր լեռների» հոգեբանությունից, իսկ «Բարձրից» բանաստեղծությունը խոսում է Ջրադաշտ - Թումանյանի մասին:

Դառնանք, սակայն, Նիցշեի նկատած սիմվոլների տիպաբանությանը՝ կապված մարդկային մտածողության և ոգու հավերժական նույնության հետ: Մարդկային մշակույթի հնագույն էջերը թերթելիս (հնդկական ուպանիշադներ, հինկտակարանային գրություններ, «Գիլգամեշ»...), որոնք ստեղծվել են դարերի ու հազարամյակների հեռավորությամբ, դիտվում են բազմաթիվ նմանություններ, էլ չենք խոսում սիմվոլիկայի նույնությունից: Այսպես. և՛ «Գիլգամեշ»-ում, և՛ «Ժողովող»-ում կարդում ենք գրեթե նույն տողերը.

Ջառիթափով չի բարձրանա մեկը, իսկ երկուսը կմագլցեն,
(-----)

Եռահյուս ճոպանը շուտ չի կտրվի¹³...

և

Եվ եթե մեկը բռնություն անի, ապա երկուսով նրա դեմ կկանգնեն,
և եռապատիկ թելը շուտ չի կտրվում (Ժող. Գ., 12)¹⁴...

«Եռահյուս ճոպանը» կամ «եռապատիկ թելը» երկուսի միասնությունն են խորհրդանշում. որպես սովորական պատկերավորման միջոց՝ այլաբանություն, վերոհիշյալ տողերը առանձնակի բարդություն չեն պարունակում, ամեն բան պարզից պարզ է: Դիտարկենք բարդ մի հատված: Նիցշեի «Այսպես խոսեց Ջրադաշտը»-ում կարդում ենք.

Մարդս մի լար է- կապած կենդանու և գերմարդի միջև,-
անդունդի վրայ ձգած մի լար¹⁵...

Նրա պարադոքսային մտածողությամբ դրսևորված խիտ միտքը առաջին հալացքից հասկանալի չէ: Գրեթե նմանատիպ տողեր կան հնդկական ուպանիշադներում, որոնցից մեկն ասում է.

Բարձրացեք, արթուն եղեք,
Բարիքներն ունենալով՝ ձգտեք ըմբռնել նրանք:
Այդ ուղին նման է դանակի սուր շեղբին, ծանր է ու անանց¹⁶...

«Դանակի սուր շեղբը» կամ «անդունդի վրա ձգված լարը» ահավոր վտանգ են հուշում: Ուպանիշադները սովորեցնում են հոգևոր բարձրացում, արթնացում, բայց և զգուշացնում են այդ ուղու չափազանց վտանգավորության մասին: Սա օգնում է հասկանալ Նիցշեի միտքը. ցածր մարդուց, նույնն է թե կենդանուց բարձր գերմարդ տանող ուղին անդունդի վրա ձգվող լար է, իսկ լարն ինքը մարդն է, որը կարող է և հասնել հոգևոր ու մտավոր արթնության, կարող է և անկում ապրել, ոչ

¹³ Հին Արևելքի պոեզիա, Եր., 1982, էջ 123 (Գիլգամեշ):

¹⁴ «Ժողովող»-ից այս և հաջորդ մեջբերումների թարգմանությունը՝ Հ. Էդոյանի:

¹⁵ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, Եր., 1990, էջ 10:

¹⁶ Հին Արևելքի պոեզիա, Եր., 1982, էջ 309:

թե անկում ապրել՝ կտրվել և չհասնել գերմարդուն, այլ անկում ապրել նրան հասնելուց հետո, երբ կբացվեն բոլոր գաղտնիքները: Ուպանիշադների սիմվոլիկայում «դանակի սուր շեղքը» ևս հուշում է վտանգի մասին: Վտանգն առավել լավ երևում է «Գիլգամեշ»-ից բերված այս հատվածում.

**Թող քեզ չսպասի նավահարթակը, թող ջրանցումը մոռանա քեզ,
Այն, որի ափով դու քայլել ես, ծարավի եղիր այդ ափին¹⁷:**

Կյանքի փորձով իմաստնացածը (հիշենք «Գիլգամեշի» ենթավերնագիրը՝ «Ամեն ինչ տեսածի մասին») խորհուրդ է տալիս «քայլած ափին ծարավի լինել», մյուս կողմը մութ է ու խորհրդավոր, ասել է թե՛ անմահությունն փնտրող Գիլգամեշը ըմբռնում է անմահության անհնարինությունը: Եվ խորհուրդը սա է՝ «ծարավի եղիր» այս ափին՝ կյանքին, ապրիր քո կյանքը մարդկայնորեն և վերջ:

Իսկ ուպանիշադներում՝

**Թող մենք հասնենք
այդ բարձր, անանց Բրահմանին,
այդ կամուրջին զոհաբերողների, նրանց համար, ովքեր
ցանկանում են անցնել մյուս ափն հանգստության¹⁸...**

«Մյուս ափը» հանգստությունն է խոստանում, քանի որ հոգու փնտրտուքը հանգեցնում է Աստծու նկատմամբ խոր և համոզված հավատի, ուր և «հանգստություն» կամ խաղաղություն է: «Գիլգամեշի» և ուպանիշադների վերոհիշյալ հատվածների սիմվոլիկայի պարզումը օգնում է հասկանալ «Այսպես խոսեց Ջրադաշտի» նաև այս հատվածը. «Ես սիրում եմ մեծ արհամարհողներին, որովհետև նրանք ամենամեծ յարգողներն են և միս ափի կարօտի նետերը»¹⁹: Անհասկանալի է «արհամարհող-հարգող» պարադոքսալ հակադրությունը, բայց «միս ափի կարօտի նետերը» սիմվոլիկան բացելով՝ ասելիքը հստակ ըմբռնվում է. մեծ արհամարհողները՝ հանճարները, իրենց ժամանակաշրջաններին հակադրված մեծերը, որոնք անգամ խելագար են դիտվել (հիշենք Բեթհոֆելենի դեպքը)²⁰, մարդկության, մարդ արարածի, տիեզերքի հանդեպ միայնակ ու թշվառ արարածի մեծագույն հարգողներն են և նրա նկատմամբ անսահման սիրուց «մյուս ափի» որոնման մոլուցքով առաջ են մղում մարդկության մշակույթն ու գիտությունը՝ դրանով իսկ առաջ մղելով, զարգացնելով հենց իրեն՝ մարդուն:

Վերը նշված մեկ-երկու հավերժական սիմվոլների «բացումը» հուշում է կրոնափիլիսոփայական հնագույն տեքստերում թաքնված խոր գիտելիքների առկայության հանրահայտ փաստը: Այդ ամենը բացառիկ խորությամբ պատկերացնելով՝ Ֆ. Նիցշեն տալիս է ի՛ր Ջրադաշտը, որը մեզ համար մնում է անհասկանալի՝ առանց հավերժական սիմվոլներն ըմբռնելու: Խոսելով սիմվոլիկայի տիպաբանության մասին՝ պետք է նշել Նիցշեի տեսակետն այդ հարցում, համաձայն որի երևույթը ոչ թե գրագողության կամ էպիգոնության հետևանք է, այլ բխում է որոշակի թեմաների շուրջ տարբեր դարաշրջաններում մարդու խոհի միանմանությունից: Գեղարվեստական գործընթացում զուգադիպությունների տիպաբանությունը, եթե գեղագիտորեն բացատրվում է որպես տարբեր ժողովուրդների կյանքի պատմական հանգամանքների նույնության կամ գեղարվեստական մշակույթի սպիրալաձև զարգացման հետևանք, երբեմն էլ՝ «մշակույթի զարգացման տարբեր ցիկլների գոյությամբ»²¹, Ֆ. Նիցշեն այդ ամենի հիմքում իրավացիորեն

¹⁷ Նույն տեղում, էջ 162-163:

¹⁸ Նույն տեղում, էջ 308:

¹⁹ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, էջ 10:

²⁰ Տե՛ս Լ. Стоковский, Музыка для всех нас, М., 1959, с. 18:

²¹ Յու. Բորև, Գեղագիտություն, Եր., 1982, էջ 283:

տեսնում է ամենախոր պատճառը՝ մարդկային հոգու նույնականությունը բոլոր դարաշրջաններում:

Վերը շարադրվածից բխում է Նիցցեի ուսմունքի էլիտարությունը, որի բնականոն պատճառ-հետևանքն էր մեծ փիլիսոփայի անձնական տառապանքն ու մեհնությունը: Հզոր անհատականություններին վերուստ տրված մեհնությունը սուբլիմացվում է իշխանության իրավունքով՝ նրանց «հրամայողներ» և «օրենսդիրներ» դարձնող: «Նրանք ասում են՝ «սա այսպե՛ս պետք է լինի», նախ նրանք են որոշում մարդու «դեպի ո՞ւր»-ն ու «ինչի՞ համար»-ը... նրանք արարող ձեռքը մեկնում են դեպի ապագան, և այն ամենը, ինչ կա ու եղել է, նրանց համար ըստ այդմ դառնում է միջոց, գործիք, *մուրճ* (ընդգծ.՝ Մ. Շ.): Նրանց «ճանաչումը» *արարում է*, նրանց արարումն օրենքների սահմանում է, նրանց առ ճշմարտության կամքը՝ *առ իշխանություն կամք է*²²: Այս հզոր մարդկանց սարսափելի մեհնական պատճառը ոչ այնքան չհասկացվածությունն է, որքան դիտավորյալ լռությունը նրանց շուրջ: Չհասկանալով հանճարներին կամ, որ ավելի ճիշտ է, հասկանալով, որ նրանք իրենցից բարձր են կանգնած և ավելի հեռուն ու խորն են տեսնում, «մերձավորները» ներել չեն կարողանում: Աֆորիզմներից մեկում Նիցցեն գրում է. «Սա ինձ դուր չի գալիս: - Ինչո՞ւ: - Ես դեռ չեմ աճել մինչև դա»: -Երբևիցե որևէ մեկն այսպես պատասխանել է»²³: Խորացնելով իր միտքը «միջին» որակի մարդու մասին՝ Նիցցեն ընդգծում է նրա՝ «կանոնին» պատկանելը և հակադրությունը բացառիկ անհատականությանը: Այդ հակադրության արմատը սեփական անձի միջակության գիտակցումն է, որը վերաճում է ressentiment-ի²⁴ (ֆրանսերեն տարրդունակ այս բառով Նիցցեն բնութագրում է ինչ-որ առարկայի, անձի ուղղված և հետզհետե ռեֆլեքսի վերաճող ատելության և չարացածության, անորոշ թշնամության մթին, աճող, տևական և ասես հաստատուն դարձող ռեակցիան): Ասույթներից մեկում Նիցցեն ծաղրով գրում է. «Տաղանդ ունենալը բավական չէ. հարկավոր է դրա համար նաև ձեր թույլտվությունն ունենալ, - հը՞, իմ բարեկամներ»²⁵: Միջակություններին նա անվանում է ցնիկներ, որոնք մտքի և գոռոզության այնպիսի մակարդակի վրա են, որն ստիպում է նրանց իրենց և իրենց նմանների մասին խոսել «վկաների առջև»: Մեծ անհատականություններին խորթ են նման ստորությունները, հանճարներ, որոնք իրենց երբեմն շփոթված են զգում նմանների «նախարային» թվաքանակի առաջ: Այսինքն՝ բացառիկ անհատը, ուժեղ անհատը ավելի թույլ է «հոտային բնագոյով» համախմբված ավելի թույլերի միագումարի առաջ: Նիցցեն ասելիքն ամփոփում է այսպես. «Կարճ՝ դուք, հոգեբաններ, ուսումնասիրեք «կանոնի» փիլիսոփայությունը «բացառության» հետ պայքարում. այդժամ աստվածների ու աստվածային չարամտությանն արժանի մի տեսարան կունենաք»²⁶: Մարդկային հասարակության մեջ գոյություն ունեցող այս օրենքը ձևակերպելով՝ Նիցցեն «ազատ մտքեր» է շարադրում, կատարում օբյեկտիվ փաստարկումներ, սակայն, որպես մարդ, մեծ մտածող և հոգեբան՝ անսահման է նրա մարդկային տառապանքը: Արտաքին ստոնության և հավասարակշռության տակ հերոսական, գրեթե ինքնազոհաբերման հասած անափ տառապանք է: Ինչո՞ւ է ծայրվում մարդն արտաքին դիմակով: Կան «զվարթ» մարդիկ, որոնց կեցվածքը ներքին խոր տառապանքի արտաքին դիմակն է: Մեծ անհատականությունների հոգեկան բարդ կառուցվածքում բազմազան ետերի առկայությունն օրինաչափություն է: Արդյոք բոլորի՞ն է տրված մեծերի թվացյալ դիմակի տակ տեսնել իրականը:

²² Ֆ. Նիցցե, Բարուց և չարից անդին, էջ 104:

²³ Նույն տեղում, էջ 73:

²⁴ Տե՛ս Փ. Ницше, Сочинения, М., 1990, т. 2, էջ 784-786:

²⁵ Ֆ. Նիցցե, Բարուց և չարից անդին, էջ 70:

²⁶ Նույն տեղում, էջ 111:

Անշուշտ՝ ոչ: Նիցշեն ընդգծում է ազատ մտածողությամբ, հանդուգն մտածողությամբ մարդկանց երկփեղկված ներաշխարհի բարդությունը, մարդիկ, որոնք շրջապատին չեն ուզում ցուցադրել, որ իրենց կրծքում փշրված, բայց հպարտ սիրտ է տրոփում, և ամփոփում է. «Երբեմն խենթությունն ինքը չարաբաստիկ ու չափազանց ստույգ գիտելիքի դիմակն է»²⁷: Մարդկայնորեն հասկանալի է Նիցշեի և՛ տառապանքը, և՛ արհամարհանքը «մերձավորների»՝ իրեն շրջապատող գիտնականների կամ «ամբոխի», «խալխի» նկատմամբ, որոնք Նիցշեին չէին կարող ընկալել առանց ressentiment-ի: «Գիտնական» կոչվող միջակություններին նա համեմատում է փողոցի մուրացիկների հետ, որոնք այքը տնկում են սրան-նրան, այդպես էլ գիտնականներն են «սպասում և այքերը տնկում մտքերի վրա, որոնք ուրիշներն են արդեն մտածել»²⁸: Իսկ այս ամենի պատճառը սա է. «Եվ երբ ես նրանց մոտ էի ապրում (գիտնականների - Մ. Օ.)՝ նրանցից վեր էի ապրում. դրա համար էլ ինձ չէին տանում նրանք»²⁹: Առաջին պահ գտեհիկ և չար է թվում Նիցշեի քննադատությունը «մերձավորների» նկատմամբ: «Այսպես խոսեց Ջրադաշտը»-ի շուկայի ճանճերի և մորմերի սիմվոլները դրա վառ օրինակն են: Սակայն երբ փորձում ենք կարդալ մարդու հոգու խորքը, այնքա՛ն մեծություն, ցավի և տառապանքի անդունդներ ենք տեսնում այնտեղ. պատճառը «մերձավորներն» են: Նիցշե-հոգեբանը խորությամբ կարդալ գիտի մարդու հոգին և բնազդների, ստոր հակումների տեղն ու դերը նրա հոգեկանի կառուցվածքում: Նիցշեն ամբոխից իրեն՝ անգամ չի առանձնացնում, երբ խոսքը ենթագիտակցական բնազդների մասին է: «Դեպի ազատ բարձունքներն են ձգտում դու, աստղերի է ծարսւ քո հոգին: Սակայն քո վատ հակումներն էլ են ծարսւում ազատութեան:

Քո վայրենի շները ձգտում են ազատել. նրանք հաշում են հաճույքից իրենց նկուղում, երբ քո ոգին բոլոր բանտերի դռները բացել է ջանում»³⁰: Ի դեպ, վայրի շների սիմվոլը՝ որպես ստոր բնազդներ, և առաջին հերթին հենց չկառավարվող սեռական ենթագիտակցական մղում, հանդիպում է դեռ «Գիլգամեշ»-ում՝ Էնկիդդուի կերպարով, իսկ Լ. Օսանթի «Ժղթայվածը»-ում Արտավազդի շղթայված գամփները ևս նույնն են խորհրդանշում՝ մարդու մեջ երկրայինը, ստոր հակումները:

Ծանոթանալով Նիցշե անհատի մարդկային տառապանքին՝ զարմանում են մարդ արարածի կամքի պնդությունից: Թվում է՝ նման հանճարը, որքան էլ հանճար, տրորվելու, կորչելու էր «խալխի», «մորմերի» ոտքերի տակ: Բայց մարդու վեհությունն ու Մարդ տեսակի առանձնահատկությունը կամքն է, որի շուրջ էլ հյուսված են փիլիսոփայի աշխատություններից շատերը: «Չաստվածների մթնշաղը» ավարտվում է «Խոսում է մուրճը» այլաբանական պատմությամբ: Քանի որ մուրճի սիմվոլը վերը մեզ արդեն հանդիպել է, այս հատվածի ասելիքը լրիվ պարզվում է. «Այս նոր տախտակն են, օ, իմ եղբայրներ, ես դնում ձեզ վրա. ՊԻՆԴ ԵՂԵՔ»³¹: Պինդ կամք է նա պահանջում մարդուց, մուրճը պնդություն կոփելու սիմվոլ է: Եթե քրիստոնեական կրոնը մարդուն տալիս է տասը պատվիրանների տախտակը, Նիցշեն բերում է մեկ պատվիրան՝ կամքի պնդություն: Երկմտանքն ու հոգեկան շփոթը տառապանք է, թուլություն: Նիցշեն սրան հակադրում է ուժեղ կամքը, որը բերում է հոգու ազատագրում: Քրիստոնեությունը մարդուն դնում է պատասխանատվության տակ՝ ենթադրելով, որ նրան տրված է կամքի ազատություն: Նիցշեն «կամքի ազատությունը» փոխարինում է ուժեղ և թույլ կամք տարբերակով: «Սակայն ինձ մշտապես նորից ու նորից առ մարդն է մղում

²⁷ Նույն տեղում, էջ 164:

²⁸ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, II մաս, «Նորք», 1990, թ. 6, էջ 110:

²⁹ Նույն տեղում, էջ 111:

³⁰ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, էջ 54:

³¹ Ֆ. Նիցշե, Չաստվածների մթնշաղ, էջ 257:

իմ անդուլ արարելու կամքը. այդպես մուրճն է դեպի քարը մղվում»¹²: Անդուլ արարելու կամքը հզոր կամքի դրսևորումն է, կամքի այն տեսակը, որը բնորոշ է բացառիկ անհատներին, քանի որ կամքի այդ տեսակն աչքի է ընկնում արտասովոր պրնցիպիությամբ և անվախճան տևականությամբ: Կամքի Ֆալս տեսակն է, որ օգնում է Նիցշե անհատին անսահման մենակությամբ ոչ միայն ապրել, այլև արարել և մարդկությանը թողնել խոր մի գիրք՝ «իմ Զրադաշտը»: Նիցշեի տեսության հիմնահարցերից մեկը հզոր կամքն ու «կամք առ իշխանություն» հասկացություններն են: Մարդկության ողջ պատմությունը համարելով կյանքին հարմարվելու և գոյատևելու խնդիր՝ նա գտնում է, որ այդ պայքարում կարևոր է *կամքի դեբը, որը ձգտում է իշխանության*: Այս մրցակցության մեջ Նիցշեն հաղթանակը տեսնում է ուժեղ կամքի մեջ: Բնականաբար կամքն առ իշխանություն մարդուն մղում է առաջ, միշտ դեպի վեր, որից էլ բխում է կարևոր երկրորդ միտքը՝ *գերմարդ* հասկացությունը: Գերմարդը մեծագույն կամքն է և արարումը, գերմարդը բոլոր առումներով ազատ և անկաշկանդ մարդն է: Գերմարդու հասկացությունը տալով՝ Նիցշեն ժխտում է նախորդ բարոյականությունը և բերում նորը, իրենը՝ գերմարդունը: Ապարարոյապաշտությունը կամ իմմորալիզմը առաջին հայացքից է անկում կամ de'cadence, քանի որ այս հարցում ևս միջշեական պարադոքսալ մտածողությամբ պետք է մտնենալ ասվածին: Մեծ փիլիսոփան ժխտում է այն «բարոյականությունը», որը կրտրում է մարդու թևերը թռիչքից, որն իր կաշկանդողականությամբ խանգարում է մարդուն ելնել վեր ու վեր, լինել ինքնիշխան և համարձակ, ապավինել սեփական ուժերին: Նիցշեն քննադատում է քրիստոնեական բարոյականությունը: Գերմարդու աճի ճանապարհին հիմնական խոչընդոտը կրոնը տեսնելով՝ Նիցշեն փշրում է քրիստոնեական կապանքները՝ գերմարդուն տեսնելու ազատ. «Մորտի երջանկությունից ազատ, աստվածներին ու երկրպագումները ողջ թողափած, աներկյուղ ու երկյուղալի, մեծ ու մենակ- այսպես է կամքն արդարացի»¹³: Սակայն գերմարդը ակնթարթորեն չի ծնվում, դա հոգևոր հզոր, տառապագին ու երկարատև պայքար է ներքին բազմաթիվ եսերի, հակասությունների դեմ, դա պատերազմ է՝ ինքն իր դեմ և հաղթանակ՝ ինքն իրեն: Մեծագույն տառապանքն ազնվացնում է հոգին և մղում դեպի վեր, կատարսիս, արարում ու բարիք՝ բոլորին: Սա է իր մեջ ներառում գերմարդը: Կենդանու և գերմարդու միջև մի պրկված լար է մարդը, որի անցումը, բարձրացումը գազանից գերմարդ ահավոր ինքնատիրապետման ու կամքի ճանապարհ է: Գերմարդու տարբերակներն են նաև սուրբը, հերոսը, որոնք, ընդհանուր հաշվով, նույն բանն են. բոլորի խորքում էլ կամքն է առ իշխանություն, որի բարձունքից նրանք ի գորու են իշխելու:

Արժե «սրբի» հասկացության շուրջ փոքր-ինչ հանգամանորեն խոսել: Նիցշեն բացատրում է աշխարհի հզորների՝ սրբերի առաջ խոնարհվելու ֆենոմենը: Աշխարհի տերերը, որոնք ունեն կամք և իշխանություն, սրբի՝ հարցական նշան հիշեցնող կերպարանքի տակ կոահել են գերազանցող ուժը, զսպման ուժը, ժուժկալության ուժը, կամքի ուժը, որում նրանք սեփական ուժն ու տիրելու հաճույքն են կրկին ճանաչել և կարողանալով հարգել սրբին՝ նրանք իրենց մեջ եղած ինչ-որ բան են հարգել, այսինքն՝ նրանք մի ուժ էին կոահում՝ դեռևս ծնկի չբերված մի օտար թշնամու, իրենց անծանոթ թշնամու, որի առաջ կանգ էին առնում: Նրանք կանգ էին առնում «կամք առ իշխանության» առաջ: Սուրբը, որն իր ամենաուժեղ բնագոյներն էր զոհաբերել Աստծուն, գրեթե վերերկրային էր երևում: Սա է կամքը և գերմարդը:

«Գերմարդը» լավ պատկերացնելու համար պետք է խոսել նաև, այսպես ասած, նրա ազնիվ կոչվելու մասին, որի էությունը գերմարդու՝ ինքն իրեն արժեքներ ստեղծողի ու սահմանողի գիտակցումն է: Նրա մեջ ուժ ու լիություն է հորդում,

¹² Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, II մաս, «Նորք», 1990, թ. 6, էջ 97:

¹³ Նույն տեղում, էջ 105:

և նա տիրող է ու արարող: Գերմարդուն բնորոշ է նաև ազատության զգացումը, որն ասես և՛ կա, և՛ չկա, որը սակայն *կամենում է գերմարդը և նվաճում: Գերմարդը* ներքին պայքար է և ազատագրում կապանքներից: «Այսպես խոսեց Ջրադաշտը» գերմարդու երգն է: Իգուր չէ հեղինակն այն վերնագրել նաև «Մի գիրք բոլորի և ոչ ոքի համար», քանի որ այն ուղղված է բոլորին, բայց հասո՞ւ է բոլորին: «Մարդս մի բան է, որ պետք է յաղթահարի»⁴⁴: Եթե մարդն իր մեջ հաղթահարի զազանին, ուղին բացվում է դեպի գերմարդ: «Ես կամենում եմ մարդկանց իրենց գոյութեան իմաստը սովորեցնել. այդ գերմարդն է՝ մարդ կոչված մութ ամպի կայծակը»⁴⁵: Նիցշեն գերմարդու կերպարը կերտում է բանաստեղծական լեզվով, այլաբանություններով, փոխաբերություններով, համեմատություններով. «Այսպես խոսեց Ջրադաշտը» իր խոր փիլիսոփայական խոհականությամբ գեղարվեստական շքեղ գույների երանգապանակ է, որից ելնում, վեր է հառնում գերմարդու լուսավոր պատկերը: Այն ինքնավստահ և տիրական կամքով առաջնորդ է, որը գիտե՝ ուր է տանում իր հոտին: Ժխտելով քրիստոնեական կրոնը՝ հաստատում է նոր կրոն՝ գերմարդու կրոնը, ուր մարդը՝ անկաշկանդ բոլոր կապանքներից, ազատ ոգով, հավատում է միայն սեփական ուժին: Սա հզոր առաջնորդի երգ է, որն իր հետևից տանելու է «ընկերներին», ո՛չ «խալխին»: Այդ ստեղծագործ հոգին փնտրում է իր նման ստեղծագործողներ և ո՛չ հավատացողներ՝ կույր, առանց ըմբռնելու, այնպիսի համաստեղծողներ, որոնք նոր տախտակների վրա (իբրև տասը պատվիրանների նոր տախտակներ) նոր արժեքներ են գրում: Այս ուղու վրա տատանվողների համար տեղ չկա: Գերմարդուն ձգում է պայքարը, ո՛չ աշխատանքը, հաղթանակը, ոչ խաղաղությունը: «Թո՛ղ ձեր աշխատանքը պայքար լինի, ձեր խաղաղութիւնը - յաղթանակ»⁴⁶: Այս պարադոքսը ևս պետք է հասկանալ հոգու ներսում տարվող պայքար որպես, իսկ հաղթանակը՝ ինքն իր նկատմամբ հաղթանակ: Ինքն իրեն հաղթողին Նիցշեն անվանում է «պատերազմի ի՛մ եղբայրներ»: Այս տողը ուղիղ իմաստով ընկալելով՝ բնականաբար նեղգափոխվում է բուն Նիցշեն՝ դառնալով մարդախույս, մարդատյաց և դեկադենս: Որպեսզի տարրնթերցումը սխալ եզրահանգման չլերի, բնագրային հատվածը մեջբերենք ամբողջությամբ, ուր համատեքստում ամեն բան ստանում է ճիշտ արժեք. «Իսկ ձեր ամենաբարձր միտքը - թողէ՛ք, որ այդ ձեզ հրամայեմ.- մարդս մի բան է, որ պետք է յաղթահարել:

Այսպես ապրեցէ՛ք ձեր հնազանդութեան ու կուի՛ կեանքը: Ի՞նչ բան է երկար ապրելը: Ո՞ր ուզվիկը կուզի խնայել: Ես ձեզ չեմ խնայում, ես սիրո՞ւմ եմ ձեզ սրտիս խորքից- պատերազմի ի՛մ եղբայրներ»⁴⁷:

Գերմարդու և «մերձավորի» հարաբերությունը ներկայացվում է ինչպես իր անձնական տառապանքի եզրակացություն: Պետք չեն «մերձավորներն» իրենց թշնամանքով և ստելությամբ, գերմարդն իր տեսությունը պետք է քարոզի հասկացողներին՝ ընկերներին՝ իրեն հավասարներին, ովքեր կարող են հետևել նրան, ոչ թե հալածել: Գերմարդը բարեկամին վստահում է որպես իր պատճառի, այսինքն՝ գերմարդը բարեկամ-պատճառի հետևանքն է, գալիքի տեսությունը, որը բարեկամի՛ համար է՝ նրա սիրուց, նրա բարօրության համար. «Ի՛մ եղբայրներ, մերձատրի սիրոյ խորհուրդ չեմ տալիս. ես ձեզ խորհուրդ եմ տալիս Հեռատրի Սիրոյ»⁴⁸:

«Ստեղծագործողի ճանապարհի մասին»⁴⁹ գլխում («Այսպես խոսեց Ջրադաշտը») Նիցշեն ներկայացնում է հանճարի, ստեղծագործող գերմարդու ուղին: Դառն ու տառապագին է այն, տխրության ճանապարհ է այն, մեռակի ու հալածվածի,

⁴⁴ Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Ջրադաշտը, էջ 7:

⁴⁵ Նույն տեղում, էջ 18:

⁴⁶ Նույն տեղում, էջ 61:

⁴⁷ Նույն տեղում, էջ 62:

⁴⁸ Նույն տեղում, էջ 83:

⁴⁹ Նույն տեղում, էջ 84-87:

ճգնակյացի ու Աերհայեցողի: Այս ուղով գնացողը պետք է ապացուցի, որ ուժ և իրավունք ունի դրա համար: Նա պետք է շատերի կողմից տանջվի, բայց այդ մեծակ հոգին իր հետ ունենալու է անբաժան հույսեր և արհիություն: Նա պետք է այրվի սեփական բոցում, մոխրանա, որպեսզի նորից ծնվի ու նորանա: «Ես սիրում եմ նրան, ո՛վ իրեն գերազանցող մի բան է ստեղծել կամենում ու խորտակում այսպիսով»⁴⁰: Գերմարդու էության մեջ ամբոխից բարձր կանգնած խեղճ է, որը հանուն իր բարձր նպատակի սլանում է միշտ վեր, հաստատուն, տևական կամքով ձգտում նպատակին ու կտրվում իր ժամանակից: Սա նաև սեփական հզոր կրքերի զսպման ուղին է, գազանը խեղդելու և բարձր բանականության հաղթանակի ուղին: Ներքին ինքնակատարելագործումը, հոգևոր ու մտավոր հասունության մի լեռան հասնելը նաև խոր ահավորություն ունի իր մեջ: Սիմվոլիկ լեռան կատարին կենսափորձը բացում է մարդու աչքերը. վրա է հասնում արթնությունը՝ Զարդուշտ-Զրադաշտը, և մարդու մտքին հասու է դառնում չարն ու բարին: «Բարուց ու չարից անդին» աշխատության մեջ Նիցշեն բացում է արթնության գաղտնիքը:

Գրքի նախաբանը հրաշք մի ձոն է, ուր փառաբանվում է անգիտակից, միամիտ, հոգևոր հասունության չհասած մեր առօրյա վազքը, ուր արժեքավորում ենք իրերը, հարստությունը՝ «սեր ու խնդում, գեղեցկություն, գանձ ու գահ»: Կյանքի կենսահաստատ հիմքերը հեթանոս կրքոտությամբ փառաբանող հիմն է այս նախաբանը, որին հաջորդում է հեղինակի շարադրանքը, ասելիքը ի՛ր լեռան բարձունքից: Եվ ինչքա՛ն խորն է տառապանքն ու ցավը մեծ հումանիստի անհունորեն մեծ սրտում: Նրա արթուն միտքը մորմոքվում է անգիտության չքացումից՝ «հետո մեծացանք,- երազը թոսավ»⁴¹: Փորձելով շերտ-շերտ բացել աշխարհի գաղտնիքները, կեցության և մահվան առեղծվածը, ճշմարտության որոնման ուղին, որից մարդը չի կարող հետ կանգնել հազարամյակների իր պատմության ընթացքում, Նիցշեն եզրահանգում է ամենավերջին սահմանին չհասնելու մտքին, քանզի հենց այդտեղ է հասնում բարու և չարից անդինը, բարու և չարի մյուս կողմը, ուր հայտնվածն ի վիճակի է կշռելու և՛ բարին, և՛ չարը: Սա ամենքի՞ն է հասու: Նիցշեն էլիտայի փիլիսոփան է, իր բառերով ասած՝ ընկերների, իրեն հավասարների, կամ գո՛նե հավասարների, բայց ոչ երբեք լեռան ստորտում կամ լանջերին մնացած ամբոխի:

Արթնացած միտքը, որը վերևից՝ լեռան կատարից է վար նայում, բնականաբար տեսնում է անգամ անտեսանելին. մարդկային հոգու ծալքերն է անգամ պեղում: Հենց այստեղ էլ կարող է վրա հասնել ողբերգությունը՝ ամեն ինչի իմաստագրության գիտակցումը: Սակայն Նիցշեի փիլիսոփայությունը՝ բարին ու չարը կշռած իմաստունի եզրահանգումը, այնքա՛ն է լուսավոր, պատրանքով ու երազանքով, սիրով և հույսով վեր սլանալու ձգտումով լի. այնտեղ չկա մարդուն հուսահատեցնող կամ վար ձգող որևէ բան:

Այն մարդը, որն իր կենսափորձով, մտքի խորությամբ և հոգու թռիչքով հասնում է բարու և չարի սահմանին, այդտեղից ունի երկու ուղի. կա՛մ հիասթափություն և անկում (դեկադանս), կա՛մ հզոր կամքով է՛լ ավելի առաջ՝ լցված հույսով, երազանքով և սեփական ուժերի նկատմամբ, սեփական արարման հավատով: Նիցշեն մարդուն տալիս է երկրորդը՝ գերմարդու կերպարով: Փիլիսոփայության պատմության մեջ Նիցշեի գաղափարները որակվում են որպես ուղղություն՝ «կյանքի փիլիսոփայություն» խորագրով: Կյանքի այս փիլիսոփայությունը բարուց ու չարից անդին բախվում է մի նոր հասկացության, որը Նիցշեն անվանում է «հավերժական վերադարձ»: Հոգևոր և մտավոր արթնացումը, որը հոգեկան խորագույն տառապանքի հետևանքով գերհասունացումն է և սրված պայծառատեսությունը, մարդուն կարող է առաջ մղել կա՛մ դեպի Աստված (դեպի կրոն), կա՛մ

⁴⁰ Նույն տեղում, էջ 87:

⁴¹ Ֆ. Նիցշե, Բարուց և չարից անդին, էջ 15:

դեպի սեփական ուժերին վստահելու անհրաժեշտություն՝ գերմարդուն: Եթե տա-
 նապանքի այդ հանգուցակետում կյանքն իմաստազրկվում է և թվում անարժեք,
 կործանումից փրկում է գիտակցված հավատն առ Աստված: Ուշադրություն
 դարձնենք «գիտակցված» բառին: Հավատը սովորաբար անգիտակից է և կույր:
 Սակայն Նիցշեի նշած հոգևոր լեռան բարձունքին գտնվողը *խոր բանականու-
 թյամբ* վերադառնում է դեպի Աստված, վերագտնում է Աստծուն. այս ուղով է
 տանում կրոնը: Իսկ Նիցշեն իր ուսմունքով նախընտրում է մյուս ուղին. լինել գեր-
 մարդ, գերհզոր, *ապավինել սեփական կամքին* և հույսով ու հավատով արարել
 մարդկային ապագան: Այսինքն՝ ըստ Նիցշեի՝ մարդկության կյանքի դարավոր
 պատմությունը հոգևոր արթնացման, ունայնության ահավոր անդունդի ընկալ-
 ման և դրանից պարտադրված հետ մղվելու, ամեն ինչ նորից սկսելու, նորից որո-
 նելու պատմություն է, որն էլ նա անվանում է «հավերժական վերադարձ»: Մարդ-
 կային միտքն ու հոգին հավերժորեն ձգտում են դեպի նախնական սկզբնական
 կետը, որից նորից աճելով և հասնելով բարուց ու չարից անդին՝ նորից հետ է մղ-
 վում՝ «հավերժական վերադարձ»: «Վերադարձնաբարձ է Ջրադաշտը, մանուկ է
 դարձել Ջրադաշտը, արթնացած մեկն է Ջրադաշտը»⁴²: Մանուկ-արթնացած հա-
 կադրությամբ ստեղծված պարադոքսում արթնացածի հետմղումն է դեպի ման-
 կան անգիտություն, որն ինքն էլ հենց հավերժական վերադարձն է: «*Կյանքի փի-
 լիսոփայության*» առանցքը մահվան և կյանքի հակադրությունն է, մահվան
 փաստի անխուսափելիության ընկալումը, որը պարտադրում է մարդուն կյանքի
 հավերժական գոյապտույտում ճիշտ կողմնորոշվելու և սթափ գիտակցելու իր
 տեղն ու դերը՝ ազատվելով կրոնի զսպաշապիկից և ապրելով ազատ ու անկաշ-
 կանո բարոյականությամբ՝ գերմարդու՝ ամենաբարոյական և հոգեպես մաքրա-
 գործված մարդու բարոյականությամբ: Գեղագիտական-գրական տեսանկյու-
 նից «կյանքի փիլիսոփայությունը» (կամ որ նույնն է, թե Նիցշեի ուսմունքը) ոչ
 այլ ինչ է, քան մահվան և դրա սարսփից ծնվող ռեալ պատրանք-երազանքի
 գեղագիտական կատեգորիաների գեղարվեստական կերպավորում, ուր ա-
 ռանցքային դերը պատկանում է գերմարդու կերպարին, գերմարդ, որին համա-
 պատասխանում է վեհի գեղագիտությունը, որից անմիջականորեն բխում է
 սարսփելի գեղագիտությունը. այստեղից էլ՝ նիցշեական գերմարդու և սա-
 տանայի համընկեցման փորձերը:

М. Р. ШОЛИНЯН - Попытка толкования «сверхчеловека» Ф. Ницше. - В ста-
 тье делается попытка в общих чертах представить мировоззрение Ницше, некоторые за-
 кономерности его учения. Афористический, парадоксальный стиль его сочинений, про-
 истекающий из стремления раскрыть всю глубину предмета, а также из своеобразия
 мышления философа, стал причиной не только разночтений, но подчас и прямо проти-
 воположного понимания и трактовки того, что сказано в работах Ницше. Для однознач-
 ной, неопровержимой верной трактовки его идей необходимо понять значение употреб-
 ляемых философом символов, истоки которых нужно искать в религиозно-философ-
 ской системе, в мифологии разных народов.

Автор статьи пытается прояснить значение некоторых символов, в частности
 символику «горы». «Гора» символизирует духовную зрелость (например, Нагорная
 проповедь, идущая с духовных высот). Прояснение смысла символов помогает по-
 нять образ сверхчеловека. Это образ поднявшегося на вершину «горы» духовной
 зрелости индивида, гения, который знает, куда он ведет человечество - к самосовер-
 шенствованию, к самореализации, к катарсису. Сверхчеловек - это стоящий над тол-
 пой безумец, который во имя высокой своей цели всегда устремлен ввысь, постоян-
 ным усилием воли тянется он к этой цели и отрывается от своего времени. Путь
 сверхчеловека, это и путь усмирения собственных могучих страстей, путь укрощения
 «зверя» в себе, путь к высокой разумности.

⁴² Տ. Նիցշե, Այսպես խօսեց Ջրադաշտը, Եր., 1990, էջ 5: